2024-2025 ՈՒՍՏԱՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

10 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Տևողությունը՝ **90** րոպե:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **1918 թվականին Հայաստանի առաջին Հանրապետության անկախացումից հետո Արցախի, Սյունիքի և Նախիջևանի հետ կապված հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունները մնում էին լարված: Տիրող իրավիճակից ելնելով 1919 թվականի մարտին կառավարության կողմից «Զանգեզուր-Ղարաբաղ մարզային խորհրդի» ընդհանուր կոմիսարի պաշտոնում կատարվեց նշանակում:**
   Նշվածներից ո՞վ նշանակվեց այդ պաշտոնում:
   1. Գարեգին Նժդեհին 2. Պողոս Տեր-Դավթյանին
   3. Արսեն Շահմազյանին 4. Ռուբեն Տեր-Մինասյանին

2. **18-րդ դարում Սյունիքի ազատագրական պայքարում, Դավիթ-Բեկը Նախիջևանի խանին հաղթելուց հետո ձեռնամուխ եղավ Սիսիանից Կապան տանող ճանապարհի բացմանը, որը փակվել էր թրքախոս ցեղերի կողմից:**
   Թրքախոս ո՞ր ցեղերն էին փակել Սիսիանից Կապան տանող ճանապարհը:
   1. Կարա-Կոյունլուները 2. Ղարաչոռլու ցեղերը
   3. Ակ-Կոյունլու ցեղերը 4. Թաթարները

3. **Նշվածներից ո՞րը ավտոմատի մաս կամ մեխանիզմ չէ.**
   1. Փակաղակի շրջանակը 2. Փակաղակը
   3. Փակաղակի տուփը 4. Հետադարձ մեխանիզմը

4. **Մարտավարության մեջ ինչի՞ն էր մեծ տեղ հատկացնում Դավիթ-Բեկը:**
   1. Լեռնային մարտական գործողություններին
   2. Պաշտպանողական մարտական գործողություններին
   3. Սպասված մարտական գործողություններին
   4. Անսպասելի մարտական գործողություններին

5. **Անդրանիկը թուրքական կառավարությանը պահանջներ ուներ ներկայացնելու: Նա սպասում էր հարմար առիթի: 1901 թ. Նոյեմբերի 7-ի Առաքելոց վանքի վրա թրքական հերթական հարձակման ժամանակ, պայքարի մի դրվագում նա հասկացավ, որ իր պահանջները ներկայացնելու ժամանակն է: Ինչի՞ց Անդրանիկը հասկացավ, որ եկել է իր պահանջները թուրքական կառավարությանը ներկայացնելու պահը:**
   1. Իր զինակիցների համառ կռվից
   2. Նոյեմբեր ամսվա սաստիկ ցրտից
   3. Թշնամու անկանոն կրակ վարելուց
   4. Փամփուշտների մեծ քանակի առկայությունից

6. **Ինչի՞ համար է նախատեսված փակաղակը:**
1. Փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը
2. Փակում է փողանցքը և հարվածում է հրապատիճին
3. Փամփուշտը մղում է փամփշտանոց և փակում է փողանցքը
4. Հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը

7. **Ինչու՞ են ՀՀ ԶՈՒ կանոնագրքերը համարվում համազորային:**
1. Քանի որ տարածվում են նաև ՀՀ ոստիկանության զորքերի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ուժերի վրա:
2. Քանի որ տարածվում են նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության ստորաբաժանումների, սահմանապահ զորքերի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ուժերի վրա:
3. Քանի որ տարածվում են նաև ՀՀ ոստիկանության զորքերի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության ստորաբաժանումների, սահմանապահ զորքերի վրա:
4. Քանի որ տարածվում են նաև ՀՀ ոստիկանության զորքերի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության ստորաբաժանումների, սահմանապահ զորքերի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ուժերի վրա:

8. **1919 թ. հոկտեմբերին նշված շրջաններից ո՞րի զինված ուժերի գլխավոր հրամանատարն է նշանակվում Գարեգին Նժդեհը.**
1. Պղնձաքարի 2. Կապարգողթի
3. Սիսիանի 4. Գորիսի

9. **Նշվածներից ո՞րը հետադարձ մեխանիզմի բաղկացուցիչ մաս չէ:**
1. Հետադարձ զսպանակը 2. Կցորդիչը
3. Ուղղորդիչ ձողը 4. Ուղղորդիչ զսպանակը

10. **Նշված գյուղերից ո՞րն է Թոփչի Սիմոնի ծննդավայրը, ով Ճաղատ սարի ճակատամարտում իր թնդանոթային անվրեպ հարվածներով ցաքուցրիվ էր անում թշնամու դիրքերը:**
1. Վայոց Ձորի Սերս գյուղը 2. Վայոց Ձորի Հորս գյուղը
3. Սյունիքի Արևիս գյուղը 4. Սյունիքի Շինուհայր գյուղը

11. **Եթե գտնվում ես ականադաշտ տարածքում, ապա նշվածներից ո՞ր գործողությունը չպետք է կատարես:**
1. Իսկույն կանգ առնել և չշարժվել
2. Այդ մասին զգուշացնել մոտ գտնվողներին
3. Արագ դուրս գալ այդ տարածքից
4. Սպասել օգնության

12. **Տեղանքի հատակագծի մասշտաբը 1:50 000 է: Ինչքա՞ն կլինի երկու կետերի** հեռավորությունը, եթե համապատասխան կետերի հեռավորությունը հատակագծում հավասար է 3 սմ-ի:
1. 1500 մ 2. 1000 մ
3. 2000 մ 4. 1200 մ

13. Համապատասխանեցնել ճակատամարտի տարեթվերը:

ա) 925թ.	1. Հալիձորի ճակատամարտ
բ) 371թ.	2. Վարդանակերտի ճակատամարտ
գ) 7 0 3 թ .	3. Ձիրավի ճակատամարտ
դ) 1727թ.	4. Սևանի ճակատամարտը ճակատամարտ

1. ա-4, բ-3, գ-4, դ-1
2. բ-2, գ-4, դ-1, ա-3
3. դ-4, ա-1, բ-3, գ-2.
4. գ-1, դ-2, ա-2, բ-4

14. Ի՞նչ է հազարերրորդականը
1.Հեռավորություն: 2.Անկյուն:
3.Անկյունային մեծություն: 4.Քանոնի բաժանք:

15. Երթուղային ցիստեռնի երկարությունը 9 մ. է: Որքա՞ն կլինի ցիստեռնի հեռավորությունը դիտորդից, եթե դիտարկման անկյունային մեծությունը 18 է:
1. 550 մ. 2. 600 մ.
3. 500 մ. 4. 1000 մ.

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16.1901 թվականին Անդրանիկի և Գևորգ Չաուշի գլխավորությամբ, քանի՞ ֆիդայի ամրացան Առաքելոց վանքում:

17.Մոտոհրաձգային ջոկը հարձակման ժամանակ մեկ րոպեում արձակել է 1250 գնդակ: Որքա՞ն է կրակի խտությունը:

18.Հարձակվողների հետևից ՀՄՄ (ԶՓ)-ն մինչև քանի՞ մետր հեռավորությամբ է տեղաշարժվում:

19.Քանի՞ սմ է անհատական խրամատի խորությունը ծնկած կրակելու համար:

20.Ճառագայթային վթարների դեպքում, յոդային կալիումի բացակայության դեպքում, երեխաների համար 5%-ոց յոդը քանի՞ գրամ ջրում պետք է բացել: